



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2017 թվականի թիվ 72 - Ա

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՅԿԱԶԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ Պ. ԱՎԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՈՍԵՍԳԵՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Պ. Ավալյանի անվան Մոսեսգեղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2017թ. Մարտի 6-ի թիվ 9 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Ռ. Ադամյանի դիմումը՝

ո.ր ո շ ու մ եմ.

1. Ռուզաննա Հայկազի Ադամյանին 2017 թվականի մարտի 15-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Պ. Ավալյանի անվան Մոսեսգեղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր և լուծել Ռ. Ադամյանի հետ 2017թ. հունվարի 10-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մարզպետի ժամանակավոր պաշտոնակատար



Կ. ԱԴԱՄՅԱՆ

2017թ. մարտի 15
ք. Իջևան